«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ի՞նչպես համագործակցել սովորողների ծնողների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Հերիքնազ Սեփոյան

(Գավառ քաղաքի Գ. Մնացականյանի անվ. թիվ 7 մ/դ)

ԳԱՎԱՌ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն——4

Տարական դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ——————————————————————6

ԳՅՈՒԽ 1 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության և դաստիարակության համատեքստում ——10

Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը ——————————————————————12

ԳԼՈՒԽ 2 Ուսուցիչ-ծնող- սովորող փոխադարձ համագործակցությունը կրթության կազմակերպման գործում ——13

Ընտանիքն ու դպրոցը դաստիարակության երկու հավասարազոր սուբյեկտներ են——15

Եզրակացություն ——20

Օգտագործված գրականության ցանկ ——————————————————————————————————21

1. «Ամեն մարդ երկու դաստիարակություն է ստանում. մեկը նրան տալիս են ծնողները՝ հաղորդելով իրենց կենսափորձը, մյուսը՝ ավելի կարևորը, նա ինքն է ստանում»:

ԹԵԼՄԱՆ

2. «Դաստիարակությունն անհեթեթություն կլինի եթե այն բազմակողմանիորրեն չհարստացնես սեփական կենսափորձով»:

ԹԵԼՄԱՆ

3. «Երեխաները երկրի բնական ծաղիկներն են, իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին աճեցնում են ընտանիքում՝ ծնողները»:

Ա.Մ.ԳՈՐԿԻ

4. «Կրթության հարցում հմտությունների զարգացումը պետք է նախորդի մտքի զարգացմանը»:

ԱՐԻՍՏՈՏԵԼ

5.« Նա, ով ցանկանում է լավ դաստիարակել երեխային, դատապարտված է միշտ հավատարիմ մնալու արդար հայացքներին»:

Օ. ԲԱԼԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Ընտանիքում երեխաների ճիշտ դաստիարակության առաջին պայմանն ընտանեկան կոլեկտիվի համախմբումն ու ձևավորումն է: Ընտանեկան դաստիարակությունն իրականացնելիս ծնողները պարտավորր են մշտական կապ պահպանել դասղեկի հետ, լսել նրա խորհուրդներն ու ցուցումները, իմանալ, թե դաստիարակության գործընթացում ինչ մեթոդներ, հնարներ, միջոցներ կիրառել:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է՝ ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար: Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգրավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման, դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև :

Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:

Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Գտնել ընտանիքի մեջ այն հնարավորությունները, որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա :

Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելն ունի շատ դժվարություններ

ու խնդիրներ:

Հետազոտական աշխատանքիս խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ են ծնողները ստանձնում միայն դիտորդի դերը: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր համախոհը և գործընկերը: Ակնհայտ է,որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցները դպրոցն ու ընտանիքն են: Վարքով ու հատկապես կարգապահությամբ է պայմանավորված սոցիալական միջավայրում իր տեղն ու դերը գտնելու և այն արդյունավետորեն արժևորելու փաստը: Այդ հարցում անփոխարինելի է կրթօջախների դերը: Ուսուցիչների հիմնական գործառույթներից մեկը սովորողների մեջ համագործակցության հաղորդակցման, ոչ կոնֆլիկտային փոխհարաբերությունների հաստատման, կոնֆլիկտների կառավարման հմտությունների դաստիարակությունն է: Սրանով է պայմանավորված սովորողների ունեցած ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը և իհարկե նաև կարողունակությունների աստիճանական կատարելագործումը: Հեց այս հարցերում է, որ պետք է պահպանել ուսուցիչ-ծնող սերտ կապը, որպեսզի սովորողը հասնի ուսումնական առաջադիմության առավելագույնին: Այժմ ուսումնասիրենք ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցության և կապի մի քանի ձևեր: Դրանցից են՝

- **Ծնողական ժողովներ**
- **Հեռախոսակապ**
- **Էլեկտրոնային հաղորդակցություն**

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողներն

ավելի ակտիվ են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց-ծնող–ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջինում և ավագում:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ընտանիքը բնության գլուխգործոցներից մեկն է: Սովորողների դաստիարակության գործում ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային օղակի ունեցած կարևոր դերն անժխտելի է: Հասարակական դաստիարակության զարգացման հետ միասին իր նշանակությունը միշտ պահպանել է նաև ընտանեկան դաստիարակությունը:Ուսուցման, դաստիարակության և զարգացվածության անհրաժեշտ մակարդակ ապահովելու նպատակով ծնողների ներգործությունը սովորողների վրա ընդունված է անվանել ընտանեկան դաստիարակություն: Ընտանիքը իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ՝ վերարտադրողական,տնտեսական, դաստիարակչական, սոցիալականացման, հաղորդակցական, ինչպես նաև ժամանցի կազմակերպման և այլն:Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է մյուսներից իր կառուցվածքով, խնդիրներով, ավանդույթներով, սովորություններով, հետաքրքրություններով, արժեքներով, բարքերով, կրթության տարբեր հնարավորություններով: Յուրաքանչյուր դպրոց նման է մյուսներին ընդհանուր ռազմավարությամբ, կրթական ծրագրերով, արժեքային համակարգով: Ուստի անհրաժեշտ է ծնող-մանկավարժ փոխհարաբերությունները կառուցել այնպես, որ կարևորված լինի ծնողի պատվերը և սովորողի կարողությունները՝ հաշվի առնելով նրա հնարավորությունները: Անհրաժեշտ է նաև կրթել և զարգացնել ծնողներին, քանզի նաև նրանց իրազեկվածության և կրթության մակարդակով է պայմանավորված նաև սովորողի կրթության որակը:Հայ մանկավարժական մտքի ամենապայծառ դեմքերից մեկը՝ Հ. Հինդլյանը սովորողի դաստիարակության գործում բացառիկ նշանակություն էր տալիս ընտանիքին, մասնավորապես՝ մոր դերին: Այստեղից էլ բխում է նրա այն համոզմունքը, որ ծնող լինելն առաջին հերթին մեծ պատասխանատվություն է՝ նշելով «Ծնողի կոչումը հատկանշում է անզուգական գեղեցկություն և մեծ վայելչություն,»:Նա գտնում էր, որ անհրաժեշտ է անդրադառնալ այդ կարևոր հարցին: Նա միաժամանակ նշում էր, որ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հարցին, թե ինչպես են կրթվում և դաստիարակվում հայ աղջիկները ու պատանիները, որոնք դառնալու են վաղվա

ծնողները:Հ.Հինդլյանի կարծիքով՝ դպրոցներում պետք է մեծ նշանակություն տրվի ծնողների կրթությանը, դասավանդվի «Ծնողական գիտություն» առարկան: Նա, լինելով առաջին տեսաբանը այդ հարցում, կարողացել է այդ տեսությունը կիրառել

գործնականորեն, այսինքն՝ երիտասարդությանը սովորեցնում էր ապրելու արվեստը՝

նշելով, որ ընտանեկան կյանքն ինքնին մի դպրոց է, որ տղամարդն ու կինը փոխադարձաբար իրար պետք է լրացնեն, և, թեև տղամարդը և կինը նման չեն իրար, բայց իրենց իրավունքների մեջ հավասար են:Համոզված լինելով, որ դպրոցն ու ընտանիքը համարվում են սովորողի դաստիարակության գործին նպաստող գլխավոր ազդակներ՝ Հ. Հինդլյանը վարպետորեն փորձել է կամրջել այդ երկու ազդակները, օգնել ծնողներին, ուսուցանել նրանց և նրանցից պատրաստել ընտիր հայրեր և մայրեր, որպեսզի նրանք էլ իրենց հերթին օժանդակեն դպրոցի ստանձնած պատասխանատու և դժվարին գործին: Եվ որպեսզի դպրոց-ընտանիք կապը ապահովվի, յուրաքանչյուրը պիտի իմանա և կատարի իր պարտականությունները:Ընտանեկան դաստիարակության ուժը, որը պիտի գոյություն ունենա ամբողջ կյանքում, ծնողների և սովորողների մտերմական հարաբերություններն են, գործերը և արարքները: Առավելապես ընտանիքում է դաստիարակվում կրտսեր դպրոցականը, ձևավորվում են նրա բնավորությունն ու համոզմունքները: Ընդ որում, այն համոզմունքները, որոնք ձևավորվել են մանկության տարիներին, ամենից ավելի հաստատուն ու գործուն են: Ընտանեկան դաստիարակության առաջին կարևոր պայմանը չափավորությունն է ամեն ինչում: Չի՛ կարելի անընդհատ սիրել սովորողին, անընդհատ գովեստների արժանացնել կամ անընդհատ պարսավանքի ենթարկել, միշտ խրախուսել կամ միշտ պատժել, նրա բոլոր պահանջները կատարել կամ չկատարել: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից:Սովորողների դաստիարակության երկրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնությունն է: Ծնողների ընդունած որոշումները, վճիռները պետք է հիմնավոր լինեն: Ուրեմն ծնողների սկզբունքայնությունը,վճռականությունը, օբյեկտիվությունը սովորողներին ճիշտ դաստիարակելու երաշխիքներից են: Տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում սովորողն ընտանիքում, ինչպիսի գործնական հմտություններով է առաջին անգամ մտել դպրոցական կոլեկտիվ, որոնք են սովորողին շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյոք

ընտանեկան դաստիարակությունը դպրոցում իրականացվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ, ինչպես է ծնողների միջոցով իրականացվում դպրոցի ազդեցությունը երեխաների վրա և այլն: «Ընտանիք»ինստիտուտի ուղղությամբ հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների տնտեսական, քաղաքական, հասարակական ու

մշակութային զարգացումները դեևս շարունակվում են էապես ազդել ընտանիքի մոդելի վրա: Այդ իսկ պատճառով մեծանում է ընտանիքի «ռիսկայնության» հավանականությունը, և ապագա սերնդի դաստիարակության պատասխանատվությունն ընկնում է դպրոցի վրա:Տարրական դպրոցի ուսուցիչները սովորաբար մշտական կապ են պահպանում ընտանիքների հետ: Նրանք սովորողների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողների հետ, մշակում համատեղ ծրագրեր և գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ: Բայց այդ՝ դպրոցի և ընտանիքի ընդհանուր ջանքերն այն դեպքում ցանկալի արդյունքների կհասնեն, երբ ընտանիքն իմանա, ինչ է անում դպրոցը, իսկ դպրոցն էլ թե ինչ պայմաններում և ինչպես են դաստիարակվում սովորողներն ընտանիքում: Ծնողների հետ այդպիսի շփումների բացակայության դեպքում ուսուցիչներն հաճախ դժվարանում են սովորողների հետ իրենց աշխատանքում, չեն կարողանում նրանց նկատմամբ գտնել ճիշտ մոտեցում, թույլ են տալիս սխալներ և այլն:

Կրտսեր դպրոցականների ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերն են՝

♦համադպրոցական, դասարանական ծնողական ժողովները.

♦դպրոցականի տուն կատարվող այցերը,

♦ծնողներին դպրոց հրավիրելը,

♦աշխատանքը ծնողական ակտիվի հետ,

♦անհատական զրույցները և խորհրդատվությունները ծնողների համար,

♦ծնողական համալսարանները, կոնֆերանսները և սովորողների դաստիարակության լավագույն փորձի փոխանակումը,

♦ծնողների մանկավարժական լուսավորությունը,

♦դպրոցի կապը այն հիմնարկների հետ, որտեղ աշխատում են ծնողները,

♦ աշակերտական գործերի, հատկապես ձեռքի աշխատանքների

ցուցահանդեսների կազմակերպումը:

–Դասարանի ծնողական ժողովները: Ծնողական ժողովների կազմակերպումը

դպրոց-ընտանիք համագործակցության ավանդական, ամենատարածված եւ

արդարացված ձևն է: Ծնողական ժողովների նպատակները, բովանդակությունն ու ձևերը պետք է որոշվեն՝ հիմք ընդունելով սովորողների, ծնողների եւ ծնող-դպրոց-սովորող համագործակցության ձևերն ու կարիքները: Այս խնդիրները մանկավարժորեն ճիշտ և բարձր մակարդակով կազմակերպելու, ծնողական ժողովը ծագած խնդիրներին, ծնողների մանկավարժական լուսավորությանը ծառայեցնելու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մշակի ծնողական ժողովների թեմատիկա: Ծնողական ժողովները չպետք է կազմակերպել միայն ուսումնական տարվա սկզբում և ուսումնական կիսամյակի վերջում: Նրանք պետք է նվիրվեն ոչ միայն դասարանում իրականացվող կրթադաստիարակչական խնդիրներին, այլև ուղղված լինեն դպրոց-ընտանիք համագործակցության խնդիրներին, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ծնողների հոգեբանամանկավարժական, գեղագիտական գիտելիքների հարստացմանը: –Այցելություններ սովորողի ընտանիք: Այս ձևը տարրական դպրոցում սովորողների ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է: Սովորողների ընտանիք այցելելիս դասվարը ծանոթանում է իր սովորողի ընտանեկան պայմաններին, պատկերացում է կազմում սովորողի բնավորության, նրա հետաքրքրությունների ու հակումների, մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին: –Ծնողներին դպրոց հրավիրելը: Ուսուցիչը հաճախ զգում է ծնողներին հանդիպելու, նրանց հետ խորհրդակցելու կարիք՝ առանց ընտանիք այցելելու: Այդ դեպքում ծնողները հրավիրվում են դպրոց: Այսպիսի հանդիպումները տալիս են դաստիարակության և ուսուցման շատ հարցեր համատեղ վճռելու հնարավորություն: Ծնողներին չպետք է հրավիրել դպրոց միայն այն դեպքում, երբ սովորողը թույլ է տվել կարգապահական որևէ խախտում կամ սկսել է վատ սովորել: Երբեմն նա իրեն վատ չի պահում, սովորում է լավ, բայց ուսուցիչս ուզում է ծնողների հետ պայմանավորվել այդ սովորողի արտադասարանական ընթերցանությունը կազմակերպելու, նրան հանրօգուտ որևէ աշխատանքում ընդգրկելու, սովորողի ընդունակությունները որևէ բնագավառում զարգացնելու, ընկերների հետ փոխհարաբերությունների և այլ խնդիրների մասին զրուցելու

նպատակով: –Աշխատանք ծնողական ակտիվի հետ: Ծանոթանալով սովորողների ծնողների հետ՝ ուսուցիչս ստեղծում է ծնողական ակտիվ, որն իրեն հաճախակի օգնություն է ցուցաբերում և աջակցում սովորողների դաստիարակության և ուսուցման գործում:Շատ ծնողներ հաճախակի այցելում են դպրոց, հետևում են մանկավարժական նորություններին, այդ մասին իրազեկում են ծնողական կոլեկտիվին, ակտիվ կերպով մասնակցում են ծնողական ժողովների կազմակերպմանը, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակմանը նվիրված միջոցառումներին և այլն:

–Ծնողների մանկավարժական լուսավորությունը: Ծնողները մանկավարժական գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ժողովների և կոնֆերանսների, զեկուցումների և դասախոսությունների ժամանակ այլև օգտվելով սովորողների զարգացմանը, կրթությանը, դաստիարակությանը նվիրված գրականությունից:Արդի պայմաններում գործում է Dasaran.am կրթական ծրագիրը, որի նպատակն է դյուրացնել ուսուցիչ-սովորող-ծնող կապը, ինչպես նաև ամրապնդել որակյալ կրթության անհրաժեշտության և կարևորության գաղափարը, բացահայտել ու խրախուսել սովորողներին ներդպրոցական, միջդպրոցական և համահայկական ինտելեկտուալ մրցույթների, խաղերի միջոցով ձևավորել սովորողների ծնողների և ուսուցիչների հաղորդակցման հատուկ համակարգ և բարձրացնել դպրոցների գործունեության թափանցիկությունը:Այսպիսով, դպրոց-ընտանիքի համագործակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ ուսուցչի անհատական առանձնահատկություններով, մանկավարժական վարպետությամբ, ծնողների մանկավարժական իրազեկվածությամբ և դպրոց-ընտանիք համագործակցությամբ:Կրտսեր դպրոցականի համար գլխավորն այն է, որ նա զգա մեծերի ուշադրությունն ու աջակցությունը, նրանց հետաքրքրություններն իր ուսումնական հաջողությունների նկատմամբ: Եվ եթե տարրական դպրոցում երեխայի մեջ պահպանվի հետաքրքրությունն ու հայտնագործելու ընդունակությունը, սերը ուսման նկատմամբ, կարելի է ասել, որ հետագա ուսումնառությունը կլինի արդյունավետ, և նա ուսումնական հաջողություններ կունենա նաև միջին և ավագ դպրոցում:Այս համատեքստում տեղին է հիշել ականավոր մանկավարժ Վ.Ա.Սուխումլինսկու խոսքերը. «Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն բոլորի համար, թե՛ ուսուցիչների՛, թե՛ ծնողների:

ԳԼՈՒԽ 1 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են սովորողներին,ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների

ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում սովորողներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը , ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով: Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը սովորողներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-սովորող–մանակավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը՝ վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

- ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի սովորողներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:

- Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա: Օրինակ , կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց:

- ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր:

- Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա:

- Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողների հանդիպելուց առաջ:

- Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ:

- Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:

- Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր սովորողների՝ այդ թվում /ռիսկային խմբի/, ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

- Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է սովորողների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու սովորողի տեսակետը, սովորողի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով սովորողներին և ծնողներին, կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ: Ինչպես ասել է Սուխումլինսկին. «Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը

Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձև է: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: ժողովի ընթացքն արձանագրվում է, ըստ անհրաժեշտության՝ կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա

խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների, հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՛ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և՛ դրական և՛ բացասական կամ քննադատողական դիտարկումները:Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում, ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական

վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները:

IDEA
IDEA
IDEA

պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները:Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կրողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և

ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ: Խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով»:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում;
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը;
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը;
- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը;
- Մշտադիտարկումը;
- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը;
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը;
- Հումանիստական մղումները;
- Սեփական շահի ստորադասումը;
- Անձնային բարձր որակների դրսևորումը:

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու

դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները, հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին:Երբ

ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, սովորողն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են սովորողի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:Ուսումնական գործընթացին ծնողների ներգռավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն սովորողները, ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում, նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Անշուշտ, ծնողների նեոգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է հաստատության հետ բարեկամակեսն հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր: Ցանկացած պարագայում բախումը սովորողի և ուսուցչի միջև անթույլատրելի է, հարկավոր է միշտ պահպանել էթիկայի կանոններն ու իմանալ սեփական իրավունքներն ու պարտականությունները:Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ

համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետք է մշտապես համագործակցեն դպրոցի մանկավարժական աշխատողների, սովորողների ծնողների հետ:

ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԴՊՐՈՑԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ ԵՆ: Այդ գործընթացի արդյունավետ իրականացման անհրաժեշտ պայման է դիտարկվում ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: Այդ երկու կարևոր օղակները դաստիարակության հավասարազոր սուբյեկտներ են

դիտարկվում, որոնք ոչ թե փոխարինում են միմյանց, այլ փոխլրացնում համագործակցելով: Դաստիարակության գործընթացի հիմնախնդիրը միշտ էլ կարևոր է եղել թե՛ հասարակության, թե՛ կրթական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար և նրանց ուշադրության կենտրոնում է եղել: Սովորողի դաստիարակությունը դժվարին ու պատասխանատու գործ է, և դրա ճիշտ իրականացմամբ է պայմանավորված մատաղ սերնդի զարգացումը: Ապագա սերնդի դաստիարակության և զարգացած հասարակության զարգացման գործընթացում ընդունված է ասել, որ ծանրակշիռ դերակատարումը վերապահված է դպրոցին: Բայց առանց ընտանիքի հետ համագործակցելու դպրոցը արդյունավետ դաստիարակություն չի կարողանա միայնակ իրականացնել: Ճիշտ է, մարդը դաստիարակվում է ամբողջ կյանքի ընթացքում, սակայն կա մի տարիք, որն ամենաարդյունավետն է դաստիարակության գործընթացի կազմակերպման համար: Դա կրտսեր դպրոցական տարիքն է՝ անձի դրական որակների, հատկանիշների ձևավորման համար անգնահատելի ժամանակաշրջան, երբ սովորողներն ավելի զգայուն են, տպավորվող, դյուրահավատ, հակված են ընդօրինակմանը, ղեկավարվում են զգացմունքներով, որոնք էլ հիմնականում հանդես են գալիս իբրև նրանց գործողությունների, արարքների և առհասարակ վարքի խթաններ: Իսկ այն, ինչ ձեռք է բերվում, ընկալվում ու յուրացվում է այդ տարիքում զգացմունքների, հույզերի միջոցով, մարդու մեջ արմատավորվում ու պահպանվում է երկար ժամանակ, նույնիսկ ողջ կյանքի ընթացքում: Կրտսեր դպրոցական տարիքում երեխաների մեջ ձևավորվում են անձի կարևոր բարոյական որակներ՝ հայրենասիրություն, պարտքի զգացում, կազմակերպվածություն, հետևողականություն, նպատակասլացություն, հաստատակամություն, ճշտապահություն, կարգապահություն, աշխատասիրություն, պատասխանատվություն, որոնք, աստիճանաբար ամրապնդվելով, վերածվում են անձնային արժեքավոր որակների: Տարրական դպրոցում ընտանիքի և դպրոցի ճիշտ համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կազմակերպման նախապայման է: Անժխտելի է ընտանիքի և դպրոցի միջև

համագործակցության դերը սովորողի անձի ձևավորման, դաստիարակության և զարգացման գործում: Կարևոր է, որ դպրոցի և ընտանիքի նպատակները լինեն ընդհանուր. այն է՝ սովորողների մեջ ձևավորել ինքնորոշման, ինքնակառավարման, սկսած գործը մինչև վերջ հասցնելու, առօրյա կյանքի խոչընդոտներին ու դժվարություններին դիմակայելու համար անհրաժեշտ կարողություն–հմտություններ: Կրտսեր դպրոցականների դաստիարակության գործում, անշուշտ, անչափ կարևորվում են նաև արտադասարանական միջոցառումները, որոնց կազմակերպման դրդապատճառները

ևս պայմանավորված են ուսումնական նպատակներով: Յուրաքանչյուր միջոցառում կազմակերպելիս ուսուցիչը պարտադիր կերպով նախագծում է, թե ինչ կսովորեցնի, և, որ շատ կարևոր է, ինչ որակներ կդաստիարակի տվյալ միջոցառումը: Նմանատիպ միջոցառումները նպաստում են կրտսեր դպրոցականների գրագետ խոսքի, ազգային և համամարդկային իրական արժեքների, բարոյական նորմերի ձևավորմանը և զարգացմանը: Այստեղ ևս կարևորվում է համագործակցությունն ընտանիքի հետ: Ուսումնասիրության նպատակը տարրական դասարաններում ընտանիք– դպրոց արդյունավետ համագործակցության կարևորումն է դաստիարակության գործընթացը բարելավելու նպատակով: Ուսումնասիրության խնդիրներն են.

• Կարևորել երեխայի դաստիարակության գործընթացը թե՛ ընտանիքում, թե՛ դպրոցում:

• Առաջադրել դաստիարակության գործընթացի բարելավման, ընտանիքի և դպրոցի համագործակցության արդյունավետ ուղիներ:

Դաստիարակության գործընթացը չափազանց լայն և ընդգրկուն գործընթաց է: Սովորողները դաստիարակվում են ոչ միայն խոսքերով ու կարգախոսներով, այլև անձնական օրինակով՝ ծնողների, ուսուցիչների: Դպրոցի միջավայրը պետք է դաստիարակչական լինի, դպրոցում ամեն ինչ պետք է դաստիարակի: Ընտանիքում՝ նույնպես: Եվ, ի հավելումն ընտանեկան դաստիարակության, դպրոցում իրականացվող դաստիարակությունը կամբողջացնի դաստիարակության գործընթացը: «Սովորողին դաստիարակել պետք չէ. պարզապես պետք է օրինակ ծառայել, ճիշտ ապրել ընտանիքում և հասարակության մեջ, սիրել և հարգել միմյանց, համապատասխան պայմաններ ստեղծել սովորողի ձևավորման համար, և այդ պայմաններում կմեծանա դաստիարակված երեխա»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր սովորող դպրոց է մտնում արդեն որոշակիորեն ձևավորված կենսափորձով, զարգացվածության, հաղորդակցական կարողությունների որոշակի մակարդակով, տարբեր նախասիրություններով,

դաստիարակչական աշխատանքը տարրական դպրոցում սկսվում է այս ամենի մանրամասն ուսումնասիրությամբ, ինչի վրա էլ հենվում է հետագա ողջ աշխատանքը: Սովորողի դաստիարակության, անձի ձևավորման գործում իր առաջնային, անգնահատելի և առանձնահատուկ դերն ունի ընտանիքը: Սակայն ընտանեկան դաստիարակության առաջնահերթությունն ու կարևորությունը չի նսեմացնում դպրոցի ու հասարակության դերը սովորողի դաստիարակության գործում: Ուստի պետք է կարևորենք այս օղակների համագործակցությունը, որն, անշուշտ, սկսվում է ընտանիքից: Ընտանիքները տարբերվում են միմյանցից իրենց կառուցվածքով, խնդիրներով, արժեքներով, կրթության նկատմամբ իրենց

վերաբերմունքով: Ուստի անհրաժեշտ է ընտանիք–դպրոց փոխհարաբերությունն այնպես կառուցել, որ հաշվի առնվի առաջին հերթին յուրաքանչյուր սովորողի հնարավորությունները, առանձնահատկությունները, նաև ընտանիքի պատվերը: Սովորողի դաստիարակությունը կախված է նաև ծնողների տեղեկացվածության մակարդակից, ուստի ուսուցիչը պետք է սերտ համագործակցի նաև ծնողների հետ նրանց իրազեկելու նպատակով: Ծնողների ազդեցությունը սովորողի վրա շարունակվում է նաև դպրոցական տարիներին, ինչը ևս պետք է հաշվի առնվի դպրոցական ուսուցման ընթացքում: Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են, որոնք ազդում են սովորողի վրա: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել սովորողների մեջ բարոյական որակներ, ապահովել նրանց մասնագիտական կողմնորոշումն ու նախապատրաստումն աշխատանքի: Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացին: Ուսուցիչն ու ընտանիքը ամուր դաշնակիցներ են: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է ակնկալել դրական արդյունքներ: Ընտանիքն ու դպրոցը հավասարապես պատասխանատու և շահագրգիռ են սովորողի դաստիարակության համար: Ներկա ժամանակահատվածում հասարակությունը դպրոցի առջև նոր խնդիրներ է դնում ծնողների դաստիարակչական ներուժի ճիշտ ու նպատակահարմար օգտագործման և նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարման մեջ ներգրավելու առումով: Դա նշանակում է, որ դպրոցը և ընտանիքը պետք է դիտարկել որպես հավասար իրավունքներ ունեցող գործընկերներ, որոնց գործողությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը: Ուստի երկու կողմերի սոցիալական գործընկերությունը պետք է դառնա դպրոցում երեխայի բարեհարմարության պայման: Իսկ փոփոխությունը դիրքորոշումներում կհանգեցնի դպրոցի և ընտանիքի փոխգործակցության նոր ձևերի որոնմանը: Այս ամենից ակնհայտ է դառնում դպրոցի ու սովորողների ծնողների միջև

համագործակցության կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունը, որը, ինչպես արդեն նշել ենք, կարևոր խթան կհանդիսանա սովորողների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Դպրոցի և սովորողների ծնողների միջև համագործակցության կազմակերպման համար կարևոր դերակատարություն ունի դասղեկը: Դպրոցի և սովորողի ընտանիքի համագործակցությունը երկարատև և նպատակաուղղված աշխատանք է:Ընտանիք–դպրոց փոխհարաբերությունների բնույթը պայմանավորված է ծնողների՝ դպրոցի հանդեպ վերաբերմունքով: Տարբեր ծնողներ տարբեր կերպ են տեսնում դպրոցում դաստիարակչական գործընթացի մեջ իրենց դերը, նրանք տարբեր են, և տարբեր դաստիարակություն են տալիս իրենց

երեխաներին: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ համագործակցությունը պետք է հիմնվի տարբերակված մոտեցման վրա: Դաստիարակության գործընթացում ընտանիքն ու դպրոցը ոչ թե պետք է փոխարինեն միմյանց, այլ համագործակցեն փոխլրացնելով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործընթացում ծնողներին հանդիպող դժվարությունները, նրանց կողմից ներկայացվող առաջարկությունները, սովորողների կրթական պահաջմունքները, որոնք կնպաստեն դաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացմանը: Անհրաժեշտ է ծնող–ուսուցիչ փոխհարաբերությունները կառուցել այնպես, որ կարևորված լինեն սովորողի կարողությունները, ծնողի պատվերը: Հարկ է նաև կրթել ու զարգացնել ծնողներին, օգնել ծնողին, որ նա կարողանա ճանաչել սովորողին, բացահայտի նրա կարիքները, անհանգստությունները, լսել նրա ցանկացած մտահոգություն, ձևավորել մանկավարժական մշակույթ:Երեխայի համար ապահով դաստիարակչական միջավայրի ստեղծման գործում ընտանիքն ու դպրոցը հավասարազոր սուբյեկտներ են: Ընտանիք–դպրոց համագործակցության ձևերն են՝

• Ծնողների հետ զրույցներից պարզել ենք, որ նրանք համագործակցության նոր ձևեր են ակնկալում դպրոցից, ուսուցիչներից, օրինակ՝ շփումը հեռավար հարթակների, սոցիալական ցանցերի միջոցով, որը ստեղծված իրավիճակում ամենաանվտանգ և մատչելի տարբերակն է: Այն ծնողներին հնարավորություն կտա ամեն օր տեղեկություն ստանալու սովորողի դրսևորած վարքի մասին, ինչպես նաև կկարողանա ուսուցչի հետ քննարկել սովորողի դաստիարակությանը վերաբերող հարցեր:

•Ծնողներին, ընտանիքի մյուս անդամներին, նաև հասարակության ներկայացուցիչներին ընդգրկել դպրոցում կազմակերպվող դաստիարակչական

աշխատանքներում՝ նկատի ունենալով, որ ծնողներն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են բարոյական դաստիարակության հարցում: Ցանկալի է նաև մշակութային օջախներ այցելությունները ավելի հաճախակի դարձնել: Այդ գործում արդեն կա պետական աջակցություն, կարելի է մնացյալը ծնողների օգնությամբ իրականացնել: Կարելի է նաև ֆինանսավորման այլ աղբյուրներ գտնել: Օրինակ՝ կարելի է դպրոցական ցուցահանդես–վաճառքից ստացված գումարներն օգտագործել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության արդյունքում ինձ համար առավել պարզ դարձավ,որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է ուսուցչի հետ,ապա այդ համագործակցությունից սովորողների մոտ բարձրանում է առաջադիմությունը և հաճախելիությունը:Սովորողների մոտ զարգանում են սոցիալական,ժողովրդավարա- կան կարողունակություններ,և նրանց վարքը դառնում է դրական,ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:Ուսուցիչը և ծնողը անընդհատ փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները՝սովորողների ուսման որակը բարձրացնելու համար:Երբ,և՞,տանը,և,՞դպրոցում, սովորողի առջև դրվում է միևնույն պահանջը, սովորողն արդեն դառնում է ավելի կարգապահ,կազմակերպված և պատասխանատու:Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչը պետք է ամեն ինչ անի,որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան: «Ինչպես համագործակցել սովորողների ծնողների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացում» թեմայով հետազոտական աշխատանքը կատարել եմ սեփական դիտարկումների հիման վրա և,ինչպես ենթադրում էի արդարացան իմ սպասելիքները:Դրանցից են՝

—Սովորողների հաճախումների ապահովում.
—Սովորողների լավ վարք.
—Սովորողների բարձր առաջադիմություն.
—-Ծնողների վստահության բարձրացում ուսման և դպրոցի նկատմամբ: Սովորողներն էլ մոտիվացվում են, և սովորում են այնպիսի միջավայրում,որտեղ իրենց ծնողին՝-ընդունում և հարգում են,-համարում են գործընկեր,-տալիս են հնարավորություն մասնակցելու

դպրոցական միջոցառումներին,շփվելու դպրոցի անձնակազմի հետ:

Այսպիսով՝ չափազանց կարևոր է,որ այսպես կոչված «կրթության եռանկյունու»բոլոր կողմերը՝ ծնող-սովորող-ուսուցիչ միշտ համագործակցեն և պահպանեն փոխադարձ դրական և արդյունավետ հարաբերությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Յու.Ա.Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան «Մանկավարժություն»(Մանկավարժ 2005 ուսումնական ձեռնարկ) էջ 139-150, 269-300, 389-400:

2.Ռուզաննա Մուրադյան «Դասղեկ» մեթոդական ձեռնարկ,Երևան 2007 էջ 3-10

3.Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 2022 թ.1-2 ամսագիր, էջ 351-400-469: